| | |
|---|---|
| ՀԱՍՏԱՏՎԱԾ Է<br>ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ<br>«07» [illegible] 2000թ.<br>... ՈՐՈՇՄԱՄԲ<br>ՔԱՂԱՔԱՊԵՏ/ | ԳՐԱՆՑՎԱԾ Է<br>ՀՀ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<br>ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ<br>«28» 08 1996թ.<br>ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 286140002148<br>ՎԿԱՅԱԿԱՆ 01Ա 026635<br>վերագրանցված 29.05.2000<br>ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ<br>ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ<br>__________ 2000թ. |

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## 1.Ընդհանուր դրույթներ

1.1 Ընկերության ֆիրմային անվանումն է.

լրիվ՝ Երևանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» պետական փակ բաժնետիրական ընկերություն:

կրճատ՝ Երևանի քաղաքապետարանի «Գ.Շ.Պ. և Շ.» ՊՓԲԸ

1.2 Երևանի քաղաքապետարանի «Գ.Շ.Պ. և Շ.» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալ բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը:

1.3Ընկերությունը ստեղծվել է Երևանի քաղաքապետարանի «28.08.1996թ.» պետական ձեռնարկության վերակազմավորման (կազմակերպական իրավական ձևի փոփոխման) միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

1.4 Ընկերությունն ունի հայերեն և ռուսերեն լեզուներով, իր ֆիրմային անվանմամբ և ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք և դրոշմ:

1.5 Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (հետագայում՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (հետագայում՝ Օրենք), ՀՀ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

Այլ պետություններում գործունեություն ծավալելիս Ընկերությունը ղեկավարվում է նաև տվյալ երկրի օրենսդրությամբ:

1.6 Ընկերության գույքում ներդրված ավանդը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

1.7 Ավանդի դրամական գնահատումը կատարվում է Հիմնադրի համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական ստուգման (աուդիտի):

1.8 Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

1.9 Ընկերության գտնվելու վայրն (հասցեն) է.

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան Գ.Լուսավորչի 13

## 2.Ընկերության իրավունակությունը

2.1 Ընկերությունն օգտվում է Օրենսգրքով, Օրենքով և ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքացիական իրավունքներից և կրում է պարտականություններ:

2.2 Ընկերությունը զբաղվում է տնտեսական գործունեության հետևյալ հիմնական տեսակներով՝

ա) Երևանի քաղաքապետարանի համակարգի տրամադրության տակ գտնվող բնակելի ֆոնդի պահպանությունը, ներսում գտնվող սարքավորումների, ներքին ցանցերի, կոմունատորների և այլ կապի միջոցների անխափան աշխատանքը:

բ) Ապահոված է շենքի ներսի և շրջակայքի մաքրումն ու բարեկարգումը:

գ) Ապահովում է էլեկտրասարքավորումների անխափան աշխատանքը, դրանց վերանորոգումը, գույքի պահպանումը և վերականգնումը, շենքեր տեխնիկական սպասարկումը: Ապահովում է շենքի ներսում գտնվող ջրմուղ կոյուղու ցանցի անխափան աշխատանքը:

դ) ընկերությունը իրավասու է կատարել նաև իր հիմնական խնդիրների իրականացմանն ուղղված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ դրանց պատշաճ կատարումն ապահովելու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

2.3 Ընկերությունը կարող է իրականացնել նաև օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեություն, անհրաժեշտության դեպքում դրա համար նախապես ունենալով հատուկ թույլտվություն (լիցենզիա):

## 3. Ընկերության կանոնադրական կապիտալը և հիմնադրամները

3.1 Ընկերության կանոնադրական կապիտալը 31527,0 հազար դրամ է, բաղկացած 9.000 անվանական արժեքով թվով 3503 սովորական բաժնետոմսից, որոնք լրիվ վճարված են:

3.2 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում և նվազեցում կարող է կատարվել Հիմնադրի որոշմամբ՝ օրենսգրքի 112, 113 հոդվածներին համապատասխան:

3.3 Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ, որը կազմում է կանոնադրական կապիտալի 15 տոկոսը և ձևավորվում է տարեկան մուտքերի առնվազն 5 տոկոս մասհանումներով:

Պահուստային հիմնադրամի միջոցները օգտագործվում են Ընկերության կորուստները ծածկելու և պարտավորությունները մարելու համար:

3.4 Ընկերության Հիմնադրի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ:

## 4. Ընկերության բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

4.1 Ընկերությունը կարող է տեղաբաշխել՝

և սովորական բաժնետոմսեր

և «Արժեթղթերի և արժեթղթերի շրջանառության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

4.2 Ընկերության բոլոր բաժնետոմսերը անվանական են:

Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

4.3 Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

4.4 Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխումը իրականացվում է ընկերության բարձրագույն կառավարման մարմնի (հիմնադրի) որոշմամբ:

4.5 Ընկերության հիմնադրին՝ ընկերությունը դեռ գրանցված չլինելու դեպքում տրամադրվում է ընկերության կանոնադրական կապիտալում նրա ներդրումը հաստատող վկայական, որը բաժնետոմս չի հանդիսանում: Վկայականի հիման վրա ընկերության պետական գրանցումն իրականացնելուց և բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո ընկերության կողմից բաժնետերերին տրվում են համապատասխան քանակությամբ տպագրական ձևով պատրաստված բաժնետոմսեր կամ բաժնետոմսերի հավաստագիր (սերտիֆիկատ), իսկ բաժնետոմսերի տեղաբաշխումը ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով իրականացնելու դեպքում՝ միայն բաժնետոմսերի հավաստագիր (սերտիֆիկատ):

4.6 Բաժնետոմսերի հավաստագիրը (սերտիֆիկատը)՝ անվանական արժե-
ք է, որը վկայում է նրա սեփականատիրոջ կողմից տվյալ ընկերության
ական քանակի բաժնետոմսերի տնօրինման մասին:

4.7 Հավաստագիրը պատրաստվում է տպագրական եղանակով և պետք է
ալակի Օրենքով սահմանված ռեկվիզիտները:

4.8 Հավաստագիրը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապե-
թյան իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության
պահանջներին:

## 5.Հիմնադրի իրավունքներն ու պարտավորությունները

5.1 Հիմնադիրը իրավունք ունի՝

5.1.1 Մասնակցել Ընկերության կառավարմանը

5.1.2Մասնակցել շահույթի բաշխմանը, ստանալ շահութաբաժիններ
րության գործունեությունից առաջացած շահույթից

5.1.3 Առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող
տոմսերը

5.1.4Ստանալ տեղեկատվություն Ընկերության գործունեության մասին,
ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին, հաշվեկշռին, հաշվետվություններին
փաստաթղթերին, ինչպես նաև գործունեությանը

5.1.5 Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու
լիազորել երրորդ անձի (ներկայացուցչի)

5.1.6 Ընկերությունը լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ
ված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք
կամ դրա արժեքը

5.1.7 Ընկերության միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի ավելաց-
դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական
տոմսեր

5.1.8 Օգտվել Օրենսգրքով, Օրենքով և ՀՀ իրավական ակտերով նախա-
ված այլ իրավունքներից:



5.2 Հիմնադիրը պարտավոր է՝

5.2.1 Ավանդներ ներդնել կանոնադրությամբ նախատեսված կարգով,
չափով, եղանակներով և ժամկետներում

5.2.2 Չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի
տեղեկություններ

5.2.3 Կրել Օրենսգրքով, Օրենքով և ՀՀ իրավական ակտերով նախատեսված
պարտավորություններ:

## 6.Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

6.1Ընկերությունն իրավունք ունի հայտարարել տեղաբաշխված բաժնետոմ-
սերից եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների
վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ
շահույթից:

Շահութաբաժինների վճարման, շահութաբաժինների չափի և դրա վճարման
մասին որոշումն ընդունվում է Ընկերության կառավարման բարձրագույն
ի կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը իրավունք ունի որոշում
ել շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ
ների գործունեության ժամկետը, սահմանվում է որոշումն ընդունողի
, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

6.2 Ընկերությունն իրավունք չունի հայտարարել տեղաբաշխված բաժնե-
ի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

6.2.1 Լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը

6.2.2 Շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ
թյան տնտեսական վիճակը համապատասխանում է Օրենքով սահմանված
անկության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի
ան շահութաբաժինների վճարման հետևանքով:

6.2.3.Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է Ընկերության կանոնադրական կապիտալի գումարից կամ այդ գումարից փոքր կդառնա …բաժինների վճարման հետևանքով:

## 7. Ընկերության կառավարման մարմինները

7.1 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը հիմնադիրն է …ի քաղաքապետը), որը հանդես է գալիս Ընկերության բաժնետերերի …նուր ժողովի լիազորություններով:

Ընկերությունն պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի …հանուր ժողով հերթական ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս …ձել ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության …նետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության …հերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման …ար:

Ընկերության ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր …վները գումարվում են Հիմնադրի կողմից, որը որոշում է՝

7.1.1 Ընկերության ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և …նակը,

7.1.2 Ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը:

Ընկերության ընդհանուր ժողովներում նախագահում է հիմնադիրը կամ նրա … նշանակված անձը:

7.2 Օրենքի 86 հոդվածի համաձայն Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում և …ավասությունները իրականացնում է Ընկերության բաժնետերեի ընդհանուր … (հիմնադիրը):

7.3 Ընկերության հիմնադրի իրավասությանն են պատկանում՝

7.3.1 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և …ների կատարումը, կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը, …դրության հաստատումը նոր խմբագրությամբ

7.3.2.Ընկերության վերակազմակերպումը



7.3.3.Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, …րային հաշվեկշիռների հաստատումը

7.3.4 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

7.3.5Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը,

7.3.6 Ընկերության վերստուգողի ընտրությունն ու նրա լիազորությունների …ժամկետ դադարեցումը,

7.3.7Ընկերության առողջոն իրականացնող անձի հաստատումը

7.3.8Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական …վեկշիռների, շահույթների և վնասների հաշիվների հաստատումը և նրա …ույթների և վնասների բաշխումը

7.3.9Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր …գործարքների կնքումը

7.3.10Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների …ժամկետ դադարեցումը

7.3.11 Ղեկավար պաշտոնատար անձանց, առողջոն իրականացնող անձի …աանքի վարձատրման պայմանների որոշումը

7.3.12 Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և …ացուցակի հաստատումը

7.3.13 Այլ հարցեր, որոնք Օրենքով սահմանված են որպես բաժնետերերի …նուր ժողովի կամ խորհրդի իրավասության հարցեր:

…4 Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են … մեկից ավելի ներկայացուցիչներ, ապա որոշումներն ընդունվում են …ր ձայների պարզ մեծամասնությամբ: Իսկ սույն կանոնադրության 7 կետի …ակետով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են …ր ձայների երեք քառորդով:

… Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի …ով մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տնօրենը, ինչպես նաև …ողը և առողջոն իրականացնող անձը:

… Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է …յան տնօրենը:

Ընկերության տնօրենը՝

7.6.1 Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից

7.6.2 Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում

7.6.3 Գործում է առանց լիազորագրի

7.6.4 Տալիս է լիազորագրեր

7.6.5Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում նաև աշխատանքային՝ Ընկերության վարձու աշխատողների նկատմամբ իրականացնելով գործատուի լիազորությունները

7.6.6 Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ

7.6.7 Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ

7.6.8 Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը

7.6.9 Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր աշխատանքային ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

## 8. Ընկերության ֆինանսական գործունեության վերահսկումը

8.1 Ընկերության ֆինանսական գործունեության վերահսկումն ...ացնելու համար կառավարման բարձրագույն մարմինը (հիմնադիրը) ... է վերստուգող 3 տարի ժամկետով:

...ստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում ...ող Ընկերության բաժնետեր հանդիսացող ֆիզիկական անձ:

...ստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների ...րի կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի ...ապատասխանությունը Օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության ...րությանը:

...ստուգողի գործունեության կարգը սահմանվում է Հիմնադրի կողմից ...ված ներքին փաստաթղթերով:

Վերստուգողի վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Հիմնադրի որոշմամբ:

8.2 Ընկերության ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել արտաքին աուդիտորների (կազմակերպության կամ ֆիզիկական անձի)՝ կնքելով նրանց հետ համապատասխան պայմանագրեր:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է կառավարման բարձրագույն մարմնի (հիմնադրի) կողմից: Նրա հետ պայմանագրերը կնքվում է Ընկերության տնօրենի կողմից, իսկ ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշվում է Հիմնադրի կողմից:

## 9. Ընկերության մասնաճյուղեր և ներկայացուցչություններ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

## 10. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

10.1 Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) և լուծարումը կարող է կատարվել Օրենսգրքով և Օրենքով նախատեսված հիմքերով՝

10.1.1 Հիմնադրի որոշմամբ

10.1.2 Օրենսդրությամբ լիազորված մարմնի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ (վճռով)

10.2 Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է ՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

10.4 Ընկերությունը համարվում է վերակազմակերպված կամ լուծարված այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից: